

«Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10: Բյուզանդական աղբյուրներ, հ. Գ, Հովհաննես Սկիլիցես», թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բաբթիկյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979, 440 էջ:

Գրախոսվող դիրքը ընթերցողի դատին հանձնելու դիտական պատասխանատու խնդիրը լուծել, կարող էր այն մտավորականը, որը ոչ միայն քաջ տիրապետում է հունարենին (դա իր հերթին), այլև իր մեջ համատեղում է հայ ժողովրդի և Բյուզանդական կայսրության պատմության, նրանց փոխհարաբերությունների մոթ անկյունների հստակ իրազեկությունը, բանասիրական լայն գիտելիքներ և պատմաբանի խորաթափանց միտք ու նաև՝ անսահման աշխատունակություն: Միջադպիսին ճանաչում ստացած բյուզանդագետ Հ. Բարթիկյանը աներկբա օժտված է այդ բարեմասնություններով: Նվ եթե այդ ամենին ավելացնենք օտար և հայրենի բանասիրության դասական ավանդույթների հանդեպ հեղինակի հարազատությունը, այդ ավանդույթների պա՛պանման ու նորովի դարձացման հմտությունը, ապա միանդամայն պարզ կդառնա այն իրողությունը, թե ի՞նչ հանդամանքների ու առավելությունների դուրակցության շնորհիվ է, որ բյուզանդացի նշանավոր հեղինակի գրչին պատկանող այդ բաղմականձի գործի հայերեն հրատարակությունը պլուս է եկել պատմադիտության ու բանասիրության արգի մակարդակին համապատասխան:

Հ. Սկիլիցեսի «Համառոտություն պատմությանցի» հայերեն թարգմանությանը Հ. Բարթիկյանը նախակցել է ուսումնասիրական մի հատված, որ ըստ էության ընդարձակ մի հետազոտություն է (և ոչ թե սոսկ առաջարկ, ինչպես Հ. Բարթիկյանն է համենաոտեն անվանում), որտեղ Հ. Սկիլիցեսի «Համառոտություն պատմությանց» գործի բանասիրական քննությունից բացի՝ ըստ ամենայնի տրված է հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությունը X դ. կեսերից մինչև XI դ. 80-ական թվականների սկիզբը (1081 թ.):

Հ. Սկիլիցեսի մասին տեղեկություններ հաղորդելիս Հ. Բարթիկյանը իրավացիորեն նախ շնչել է գիտության մեջ թույլ տրված այն սխալը, երբ «Համառոտություն պատմությանց» երկի հեղինակ են համարել Գեորգիոս Կեղրենոսին: Դրա պատճառը հեղինակը համարում է այն, որ Սկիլիցեսի գործը առաջին անգամ լույս է տեսել միայն 1973 թ.: Դրանց 400 տարի առաջ լույս էր տեսել նրա լատիներեն թարգմանությունը: Խնդիրն այն է, նշում է Հ. Բարթիկյանը, որ XI դ. բյուզանդական ժամանակագիր Գ. Կեղրենոսը Հ. Սկիլիցեսի գործն «ամբողջությամբ ընդգրկել է իր տիեզերական ժամանակագրության մեջ, որը որպես Կեղրենոսի գործ հրատարակվել էր բազմիցս» (էջ VII):

Հ. Բարթիկյանն այնուհետև տեղին ու պատճառաբանված է համարել ընթերցողին ներկայացնել Հ. Սկիլիցեսի գործը՝ ըստ բաժինների, ժամանակագրության և բովանդակության: Առանց մեր հեղինակի այդ պարզարանումների, ընթերցողը ի վիճակի չէր լինի հասկանալ, ինչ «Համառոտություն պատմությանցի» մեջ որ մասն է Հ. Սկիլիցեսի գրչի արդյունքը և որը՝ ուրիշների: Ըստ այդմ նշված երկը, որն ընդգրկում է 811—1057 թթ. դեպքերը, նա բաժանում է երկու մասի. առաջին մասը Հ. Բարթիկյանը համարում է «Թեոփանեսի Շարունակող» խորագրով կրող ժամանակագրության վերաշարադրանք, որը հասնում է մինչև X դ.: Ուրեմն, Հ. Սկիլիցեսի աշխատության առաջին մասն ըստ էության բանադաղություն է (էջ VII): «Թեոփանեսի Շարունակողի» այդ գործը Հ. Բարթիկյանը խոստանում է հրատարակել որպես նույն մատենաշարի 5-րդ գիրքը: Ինքնուրույն արժեք է ներկայացնում Հ. Սկիլիցեսի աշխատության երկրորդ մասը, և Հ. Բարթիկյանի հեղինակավոր կարծիքով՝ «անգնահատելի է X դ. երկրորդ կեսից մինչև XI դ. առաջին կեսը ընկած ժամանակահատվածի պատմության ուսումնասիրության համար» և «նյութի ընդգրկման առումով այդ շրջանի և ոչ մի բյուզանդական աղբյուր չի կարող համեմատության մեջ դրվել Հովհաննես Սկիլիցեսի պատմական երկի հետ» (էջ VII):

Բավական ընդարձակ տեղեկություններ հաղորդելով Հ. Սկիլիցեսի կյանքի վերաբերյալ, Հ. Բարթիկյանն այնուհետև քննել է այն աղբյուրները, որոնք օգտագործել է Հ. Սկիլիցեսը՝ «Հասարակական պատմության» շարադրելիս: Հ. Բարթիկյանի գործն այս խնդրում բարդացել է նրանով, որ բյուզանդացի հեղինակը ոչ մի հղում չի տվել. միայն իր համառոտ նախարանում հիշատակել է բաղմամբիլ հեղինակների անունները: Հ. Սկիլիցեսի աղբյուրների համեմատական քննության խնդրում Հ. Բարթիկյանը դրսևորել է բյուզանդագիտական ու բանասիրական իր ողջ ունակությունները և մատնանշել, թե մոտավորապես ո՞ր աղբյուրից, ինչպե՞ս և ինչո՞ւ կարող էր օգտված լինել բյուզանդացի հեղինակը:

Հ. Սկիլիցեսի գործը, այսպիսով, ընդգրկում է X դ. Լերկոբոզ կեսից մինչև XI դ. առաջին կեսը, ավելի ստույգ՝ մինչև 1037 թ.: Սակայն այդ գործն ունեցել է իր Շարունակողը, որը իրադարձությունների շարադրանքը հասցրել է մինչև 1081 թ., և դիտության մեջ հայտնի է «Շարունակված Սկիլիցես» խորագրի տակ: Հ. Բարթիկյանը ցույց է տվել, որ «Համառոտություն պատմության» այդ մասը գրի է առնվել 1101 թ. հետո: Հ. Բարթիկյանը անդրադարձել է նաև Շարունակության հեղինակի օգտագործած աղբյուրների քննությանը, մի դժվարին խնդիր, որը, ինչպես երևում է, լուծում է գտել առաջարկում:

Ուսումնասիրական մասի առաջին հատվածում Հ. Բարթիկյանը համառոտակի քննարկում է Հ. Սկիլիցեսի և նրա Շարունակողի՝ հայոց պատմության այլևայլ հարցերի վերաբերյալ՝ հաղորդած տեղեկությունները միայն, իսկ երկրորդ հատվածում, որ նվիրված է հայ-բյուզանդական հարաբերություններին X դ. կեսից մինչև XI դ. 70-ական թվականները, կանգ է առնում մյուս բոլոր տեղեկությունների վրա՝ հայկական և այլ աղբյուրների հաղորդած նյութերի համագործմամբ:

Հ. Սկիլիցեսի երկի բովանդակությունից հետևում է. որ նրա հեղինակը, բյուզանդական մյուս հեղինակների նման, ոչինչ չի հաղորդում կայսրության տարածքի հայկական գաղութների մասին, այն նշանակալից դերի մասին, որ խաղացել են կայսրության տնտեսական ու մշակութային կյանքում հայկական հոծ զանգվածները և մանավանդ՝ հայ արհեստավորական, երկրագործական ու առևտրական շրջանները: Այս առիթով նշենք, որ պատկերը գրեթե նույնն էր մյուս երկրների հայկական գաղութների հետ: Եվ դա բացատրելի է: Հիմնականում լինելով սլավոն երկրի տիրող շրջանների ներկայացուցիչներ, իշխող ազգի պատմական անցքերը պատկերող ժամանակագիրներն ու պատմիչները, հարկավ, չպիտի հոգային հայկական գաղութների և նրանց դերի վերաբերյալ հանդամանալի տեղեկություններ հաղորդելու մասին. ավելին, շատ դժգոհություն նրանք դանք էին առնում դրանք կամ ներկայացնում ծուռ հայելու մեջ:

Դատելով՝ ընտանալիված երկից, Հ. Սկիլիցեսի մոտ հանգամանալից են այն տվյալները, որոնք վերաբերում են բյուզանդական ավագանու (հատկապես ռազմական) կազմում հայերի ունեցած մասնակցությանն ու դերին. սրանց շարքում կան զինվորական ցածր և բարձր աստիճանավորներ, կայսրեր և անգամ՝ Կոստանդնուպոլսի պատրիարքական դահլիս բազմած կրոնական գործիչ: Հ. Բարթիկյանը հաշվել է, որ Հ. Սկիլիցեսի ու նրա Շարունակողի մոտ նշված են շուրջ հարյուր հայ բարձրաստիճան գործիչներ, որոնք, ինչպես հետազոտել է Հ. Բարթիկյանը, անծանոթ են միջնադարյան հայ հեղինակներին: Հ. Սկիլիցեսը տեղեկություններ է տալիս Բյուզանդիայում ծառայած հայկական առանձին զորամասերի մասին: Ինչպես ճիշտ է նկատել Հ. Բարթիկյանը, այդ մասին տեղեկություններ կան նաև հայկական աղբյուրներում, սակայն միայն Հ. Սկիլիցեսից ենք իմանում, որ «Բյուզանդիայում ծառայող հայկական զորամասերը կրում էին իրենց՝ հայկական համազգեստը և իրենց արտաքինով միանգամայն տարբերվում էին հույն զինվորներից» (էջ XX): Հ. Սկիլիցեսն անդրադարձել է նաև Բյուզանդիայի հայ ազգաբնակչության նկատմամբ տեղաբնիկների վերաբերմունքին, որը հաճախ առհասարակ եղել է նաև անբարյացակամ՝ կապված դավանանքի տարբերության հետ: Հ. Սկիլիցեսն ու նրա Շարունակողը կարևոր տեղեկություններ են տալիս Հայաստանի պատմական աշխարհագրությանը: Մի շարք հայկական տեղանունների (օրինակ, Միծենականբերդի անվանը) առաջին անգամ հանդիպում ենք Հ. Սկիլիցեսի մոտ, նրանից ենք իմանում, որ IX դ. վերջին—X դ. սկզբին արաբներից գրավված տարածքներում հիմնված բյուզանդական բանակաթեմերը կոչվել են «Հայկական» իրենց զուտ հայկական բնակչության պատճառով: Հույն հեղինակը խոսում է Հայաստանի սահմաններում գտնված արաբական էմիրությունների, իր հիշատակած շրջանների բնակչության դավանանքի մասին, բնակչություն, որը, որպես կանոն, հայադավան էր: Շարունակողի հաղորդմամբ՝ «Իբրերիայում (Իմա՝ Տայք և Շիրակ), Միջագետքում՝ մինչև Լիկանդոս և Մելիտենե և նրանց շուրջ ընկած նահանգներում հերետիկոս (իմա՝ միաբնակ) հայեր են բնակվում (էջ XXI): Հ. Սկիլիցեսն ու նրա Շարունակողը արժեքավոր



նյութ են հաղորդում նաև սելյուկ թուրքերի՝ դեպի Հայաստան և առհասարակ Փոքրասիական թերակղզի ներխուժելու վերաբերյալ:

Այսպիսով, Հ. Սկիլիցեսի և նրա Շարունակողի երկում հայերի և Հայաստանի մասին բովանդակված է հարուստ և բազմաբնույթ նյութ, որը զգալապես կնպաստի հայ ժողովրդի պատմության տվյալ ժամանակաշրջանի շատ ու շատ հարցերի նորովի լուսարտմանը, հանգամանք, որը առավել ևս բարձրացնում է Հ. Բարթիկյանի կատարած աշխատանքի արժեքը:

Ուսումնասիրական մասի երկրորդ բաժինը Հ. Բարթիկյանը հարկավոր է համարել սկսել XI դ. երկրորդ կեսի բյուզանդական նշանավոր հայագի գործիչ Կեկավմենոսից կատարված մի ընդարձակ քաղվածքով: Ինչպես նշվեց, առաջաբանի երկրորդ մասում տրված է հայ-բյուզանդական հարաբերությունների (աղերսված նաև Հ. Սկիլիցեսի երկի հետ) լուսաբանումը, և Հ. Բարթիկյանի ճշմարիտ գնահատումը՝ այդ քաղվածքը՝ ռամենից ավելի խոսուն կերպով է ցույց տալիս X—XI դդ. հայ-բյուզանդական (մենք կավելացնենք նաև ոչ միայն հայ-բյուզանդական—Վ. Մ.) հարաբերությունների ճշմարիտ պատկերը: Տեղին է այստեղ բերել այդ քաղվածքը (որոշ կրճատումներով).

«Նման պատահի սկիսկուն՝ երկրում բերդեր ունենաս կամ դուռներ, դրանց տուգարիսը լինեն կաս էքսուսիաստեսը, քեղ շոխորեցնեն դանձերը կամ պաշտոնները, կայսրերի մեծ խոստումները և հանկարծ երկիրդ տաս կայսեր, փոխարենն ստանալու համար դրամ կամ կալվածներ՝ թեկուզ (տվածիդ) քսուսպատիկը: Պահպանիր քո երկրի բնկուզե փոքրիկ ու չնչին, քանզի նախընտրելի է քեղ (կայսեր) ինքնիշխան բարեկամը լինել, քան ստրուկն ու հպատակը: Դու կայսեր և բոլորի մոտ այնքան ժամանակ հարգանք, պատիվ, գովառ: Իհարե կվայելես, քանի դու, երեխաները քո ու նրանց (երեխաները) երկրիդ տներն եք: Եթե զրկվես քո երկրից, տապալվես իշխանությունիցդ, ճիշտ է, չկորնական շրջանում պիտի վայելես կայսի սերը: Բայց քիչ անց նա քեղ պիտի արհամարհի, նա քեղ բանի տեղ չի դնելու և (այն ժամանակ) պիտի համոզվես, որ ստրուկ ես և ոչ բարեկամ: Այն ժամանակ քո ստորադրյալն ահգամ քեղ համար պիտի սարսափելի դառնա. եթե նրան նեղացնես, կզուս կայսեր մոտ և քեղ կամբաստանի... Դրա վրա քո նկատմամբ ահեղ դատաստան պիտի տեսնեն, դասասլարտեն որպես նենգ ու շարաղավ ստրուկի... Կայսեր կողմից քո կուրացման մասին վճիռ պիտի արձակվի, գուցե և նա կասի. «Իմ թագավորությունը խղճում է քեզ և զրկելով քեզ ունեցվածքիցդ, պիտի աքսոր ուղարկի կամ բանտ նետի: Եվ այն ժամանակ միայն պիտի հիշես այդ փոքրիկ երկրիդ և իշխանությունդ մասին, այն մասին, թե ինչպես ապատ լինելով, հոժարակամ ստրուկ դարձար...» (էջ XXIV):

Բյուզանդիայում բարձր աստիճանի հասած, բայց աղուամենայնիվ խտրականության և աղգահայածման շորշուրներն զգացող գործիչ հավաստի վկայություն էր դա, նաև խոստովանությունն ու խրատը հայ այն իշխանավորներին, որոնց խնդրո առարկա շրջանում համաճարակի նման համակել էր տնով-տեղով, զավառներով ու աշխարհներով Բյուզանդիա գաղթելու վարակը: Առանց Հայաստան անունը տալու Կեկավմենոսը, որ ականատես էր եղել հայկական հողերի նվաճմանը, ցավով է նշում ստորադրյալի այդ պարագան, որ բնորոշ էր հայ-բյուզանդական հարաբերություններին X—XI դդ.: Հ. Բարթիկյանը 12 կետերում քննարկել ու լուսաբանել է այդ հարաբերությունների հիմնական խնդիրները. ա) Տարոնի, Տայքի, Վասպուրականի, Շիրակի (1—4 կետեր) նվաճումը կայսրության կողմից, բ) Բյուզանդիայի պայքարը Դվինի ամիրայի դեմ, գ) Բյուզանդիայի վարչության հաստատումը Հայաստանում, դ) կայսրության քաղաքականությունը տեղական ավագանու նկատմամբ, ե) Բյուզանդիայի ռազմական քաղաքականությունը Հայաստանում, զ) նրա կրոնական քաղաքականությունը, է) հայ ժողովրդի դիմադրողական պայքարը և ը) հայոց արտագաղթը:

Նշված խնդիրներից ամեն մեկը, անշուշտ, մի ընդարձակ պրոբլեմ է՝ լուծման կարիք զգացող իր մանրամասներով: Տվյալ դեպքում Հ. Բարթիկյանին հաջողվել է խտացրած գիտական խոսք ասել և մասամբ էլ մտքեր փոխանակել դրանց շուրջը, խոսք, որը ոչ միայն չի կանխում գիտական հետագա ընդարձակ ուսումնասիրությունների իրականացումը, այլև՝ խթանում է դրանց ձեռնարկումը:

Հ. Սկիլիցեսի երկի հայերեն հրատարակությունը օժտված է գիտական լայն ապարատով: Նախ «Մանոթագրություններ» բաժնի մասին: Դրանք 612-ն են (էջ 275—385) և իմաստով ու բովանդակությամբ ընդգրկում են այնքան բազմառեսակ ու տարասեռ հարցեր, խնդիրներ, իրողություններ և պատմական անցքեր, որ նրանց կազմող պետք է լայն գիտելիքներ ու իրազեկություն ունենա չէ թե միայն Հայաստանի ու Բյուզանդիայի պատմության ու մշակույթի մասին, այլև քաղաքականություն՝ ընդհանուր պատմության խնդիրներում: Սրանց պետք է ավել-

չափանք լեզուների իմացությունը: Գիտական այսօրինակ շնորհքն է ահա, որ հնարավորություն է տվել Հ. Բարթիկյանին կազմելու սույն ծանոթագրությունները, որոնց մեջ սակավաթիվ չեն նաև այնպիսիները, որոնք, պատմա-բանասիրական մանրազնին և հարկավոր ճշգրտումներ չինելուց բացի, պատմագիտական նորություններ են շատ ու շատ խնդիրների վերաբերյալ: Ավելացնենք նաև, որ ծանոթագրությունները շարադրված են աղբյուրների ու գրականության նախանձնի իմացությամբ և դրանց բարեխիղճ օգտագործմամբ:

Շատ հարկավոր գործ է «Հապավումների բանալի» բաժինը, ուր տրված են հայերեն և այլ լեզուներով օգտագործված գրականության ու աղբյուրների անվանումները՝ հրատարակչական յիականտար տեղեկություններով հանդերձ: Դա հնարավորություն է տվել հեղինակին բուն տեքստում դրանք օգտագործել կրճատ կերպով և հետևապես՝ զգալի չափով տեղ տնտեսել: Գրքի վերջում տրված են ցանկեր՝ անձնանունների, տեղանունների, ցեղանունների, ինչպես նաև բյուզանդական տերմինների:

Ամփոփենք. պատմական գիտությունների ղեկավար Հ. Բարթիկյանը թարգմանելով և գիտական բարձր մակարդակով հրատարակելով բյուզանդական նշանավոր հեղինակ Հ. Սկիլիցեսի «Համառոտություն պատմության» երկը, լուրջ ծառայություն է մատուցել X—XI դդ. հայ բյուզանդական հարաբերությունների և նույն ժամանակաշրջանի Հայաստանի պատմության ուսումնասիրման գործին: Հ. Բարթիկյանի այս և նախորդ գործերը, ինչպես նաև հայագետ և բյուզանդագետ ուսումնասիրողների մի շարք այլ աշխատություններ միաժամանակ խոսում են այն հասունացած պահանջի օգտին, թե բոլոր հիմքերը կան, որպեսզի Հայաստանը գաղափարաբանորեն ճանաչված կենտրոններից մեկը: Այդ հիմքը նախ հայ-բյուզանդական հաղթարձակ առնչություններն են և ապա՝ հայերեն ու հունարեն աղբյուրների առատությունը: Կարծում ենք, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում է, որ պետք է ստեղծվի և գործի գիտական այն օղակը, որն զբաղվելու է հայ-բյուզանդական առնչությունների ուսումնասիրությամբ, որովհետև այդ աշխատանքները խստիվ աղերսվելու են հայ ժողովրդի պատմության պրոբլեմներին և առավել նպատակահարմարն ու անհրաժեշտը դրանց համատեղ հետազոտումն է:

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր